ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

գ. Շիրակամուտ

N°—Ե -03/100

«20» 12. 2013թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ներկայացնում Շիրակամուտ համայնքի ավագանու թիվ 27 -Ն ,28-Ա,29-Ն,30-Ն որոշումները:

Առդիր 11 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ս.Մազմանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,, 18 ''-ը դեկտեմբերի 2013թվականի N 27-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Շիրակամուտ գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտ գյուղական համայնքում 2014թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/6/	դեմ /0/	ձեռնպահ/0/
Ս. Ա. Պապոյան			
Մ.Նալբանդյան			
Ս. Կ.Պապոյան			
Հ. Նալբանդյան			
Ա.Պապոյան			
Կ.Սաղաթելյան			

Համայնքի ղեկավար Ս.Մազմանյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ գյուղական համայնքի ավագանու
2013 թ. դեկտեմբերի 18 -ի թիվ 27 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտներիհամար՝ 15000 դրամ.

բ. սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20000դրամ.

501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 40000 դրամ.

1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 60000 դրամ.

3000-ից և ավելիս քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 80000դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

3000 դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

5000 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝

3000 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

15000դրամ.

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2400 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2400դրամ.

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ _____150000_դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝_____ _30000_դրամ.

6.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ _____ 3000 դրամ:

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 5000 դրամ:

11. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 1000 դրամ:

12. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել՝ 1000 դրամ:

Համայնքի ղեկավար՝ Ս.Մազմանյան/ /

18 դեկտեմբերի 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

,,18''-ը դեկտեմբերի 2013թվականի N28-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ և ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով, «Իրավական ակտերի մասին»ՀՀ օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով, համայնքի ավագանին

Որոշում է

1. Հաստատել Շիրակամուտի գյուղական համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը,աշխատակազմի աշխատակիցների և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը /համաձայն հավելված 1,2,3/
2. Ուժը կորցրած ճանաչել Շիրակամուտի գյուղական համայնքի ավագանու 2013թ. հուլիսի 19-ի թիվ 16-Ա որոշումը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/6/	դեմ /0/	ձեռնպահ/0/
Ս. Ա. Պապոյան			
Մ.Նալբանդյան			
Ս. Կ.Պապոյան			
Հ. Նալբանդյան			
Ա.Պապոյան			
Կ.Սաղաթելյան			

Համայնքի ղեկավար՝ Ս.Մազմանյան

Հավելված 1

Շիրակամուտ գյուղական համայնքի ավագանու

,, 18 '' դեկտեմբերի 2013թ. թիվ 28-Ա որոշման

Շիրակամուտ գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Գյուղապետարան

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 17
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/
1	2	3
Համայնքի ղեկավար	1	205000
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	120000
Համայնքի ղեկավարի օգնական	1	68000
Համայնքի ղեկավարի ախատակազմի քարտուղար	1	125000
Համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ	1	119000
Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ	4	100000
Համայնքի ղեկավարի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	1	61000
Համայնքի ղեկավարի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ	1	60000
Տեխսպասարկման անձնակազմ		
Վարորդ	1	60000
Հավաքարար	1	60000
Հավաքարար	1	60000
Պահակ	1	60000
Սանտեխնիկ	1	60000
Տեխնիկական աշխատող	1	60000

Համայնքի ղեկավար՝ Ս.Մազմանյան

Հավելված 2

Շիրակամուտ գյուղական համայնքի ավագնու

,, 18 "-ը դեկտեմբերի 2013թ. թիվ 28-Ա որոշման

Շիրակամուտ գյուղական համայնքի համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Երաժշտական դպրոց

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 11

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափերը /ՀՀ դրամ/
Տնօրեն	1	95600
Դասատու	10,5	60000
Հաշվապահ	1	84500
Գործավար	1	61500
Հավաքարար	1	60000
Պահակ	1	60000

Համայնքի ղեկավար՝ Ս.Մազմանյան

Հավելված 3

Շիրակամուտ գյուղական համայնքի ավագնու

,, 18 ''-ը դեկտեմբերի 2013թ. թիվ 28-Ա որոշման

Շիրակամուտ գյուղական համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Մանկապարտեզ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 5
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափերը /ՀՀ դրամ/
Տնօրեն	1	75900
Դաստիարակ	0,75	60600
Հաշվապահ	1	60000
Հավաքարար	1	60000
Պահակ	1	60000

Համայնքի ղեկավար՝ Ս.Մազմանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,, 18 ''-ը դեկտեմբերի 2013թվականի N 29 -Ն

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, և հաշվի առնելով Շիրակամուտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

Որոշում է

1.Հաստատել Շիրակամուտ համայնքի 2014թվականի բյուջեն:

Ընդամենը եկամուտներ	47946,8 հազ. դրամ
Վարչական մաս	հազ.դրամ
այդ թվում	
1)Հարկեր և տուրքեր	7259,4 հազ.դրամ
որից	
-գույքահարկ անշարժ գույքից	4587,4 հազ.դրամ
-գույքահարկ այլ գույքից /փոխադրամիջոցներ համար/	2112,0 հազ.դրամ
-տեղական տուրքեր	560,0հազ.դրամ
2)Պաշտոնական դրամաշնորհներ	36964,7հազ.դրամ
3)Այլ եկամուտներ	3471,8հազ.դրամ

ա/Ծախսերը ըստ գործառնական դասակարգման

Ընդամենը ծախսեր	47946,8հազ.դրամ
Վարչական մաս	47946,8հազ.դրամ
ֆոնդային մաս	
այդ թվում	
1)Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	25375,0հազ.դրամ
2)Պաշտպանություն	30,0 հազ.դրամ

3)Տնտեսական հարաբերություններ 100,0հազ.դրամ

4)Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն 950,0հազ.դրամ

5)հանգիստ , մշակույթ, կրոն 165,0հազ.դրամ

6)Կրթություն 17150,0հազ.դրամ

7)սոց.պաշտպանություն 1550,0հազ.դրամ

Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդ 2244,8հազ.դրամ

բ/Ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման

Ընդամենը ծախսեր 47946,8հազ.դրամ

Վարչական մաս 47946,8հազ.դրամ

ֆոնդային մաս

այդ թվում

Ա/ Ընթացիկ ծախսեր 47946,8հազ.դրամ

այդ թվում

-աշխատանքի վարձատրություն 18676,0հազ.դրամ

-ծառայությունների և ապրանքների ձեռք բերում 6240,0 հազ.դրամ

-սուբսիդիաներ 16450,0հազ.դրամ

-սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ 1850,0հազ.դրամ

-այլ ծախսեր 2414,8հազ.դրամ

2. Ուժը կորցրած ճանաչել Շիրակամուտ համայնքի ավագանու 19-ը հուլիսի 2013թվականի

,, Շիրակամուտ համայնքի 2013թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին ''
թիվ 15 որոշումը:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/6/	դեմ /0/	ձեռնպահ/0/
Ս. Ա. Պապոյան			
Մ.Նալբանդյան			
Ս. Կ.Պապոյան			
Հ. Նալբանդյան			
Ա.Պապոյան			
Կ.Սաղաթելյան			

Համայնքի ղեկավար՝ Ս.Մազմանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ.Շիրակամուտ
հեռ. 6-15-01

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,,18 '' դեկտեմբերի 2013 թվականի N 30-Ն

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, և հաշվի առնելով Շիրակամուտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

Որոշում է

Շիրակամուտ համայնքի 2013 բյուջեի՝

1. 01/06/1 դասակարգման 4269 հոդվածից 120,0 հազ.դրամ տեղափոխել՝
   ա/ 01/01/01դասակարգման 4221 հոդվածին 90,0հազ.դրամ ՝գործուղման ծախսերի համար
   բ/01/01/01դասակարգման 4112 հոդվածին 30,0հազ.դրամ՝ էներգիայի ծախսերի համար
2. 01/01/01 դասակարգման 4264 հոդվածից տեղափոխել 59,0հազ.դրամ տեղափոխել՝
   ա/09/05/01 դասակարգման 4511հոդվածին 34,0հազ.դրամ ՝սուբսիդիայի համար
   բ/01/01/01 դասակարգման 4214 հոդվածին 25,0հազ.դրամ՝ ինտերնետի համար

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/5/	դեմ /0/	ձեռնպահ/0/
Ս. Ա. Պապոյան			
Կ.Գ.Սաղաթելյան			
Ս. Կ.Պապոյան			
Հ. Ռ.Նալբանդյան			
Մ.Թ.Նալբանդյան			

Համայնքի ղեկավար՝ Ս.Մազմանյան